Արձանագրություն N 2

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-31 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 11 » « 03 » 2026թ. ժ. 10:00**

- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության պետ Ռ. Պետրոսյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի վարչության ապաստանի հայցի քննման բաժնի պետ Ս. Հարությունյան (գնահատող անդամ),
- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի վարչության ապաստանի տրամադրման վարչության ծագման երկրների վերաբերյալ տեղեկատվության բաժնի պետ Ի. Հակոբյան (գնահատող անդամ),
- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի վարչության ապաստանի հայցի քննման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ճկնավորյան (բացող անդամ),
- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի վարչության ապաստանի հայցի քննման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Մարյանյան (բացող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սարգսյան (հանձնաժողովի քարտուղար):

ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար **գրավոր և բանավոր թարգմանչական ծառայությունների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-31** ծածկագրով ընթացակարգի բացման և գնահատման նիստում արձանագրվեց՝

Օրակարգ

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.**

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-31 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ 03.03.2026 թվականին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

N	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն, հեռախոսահամարը
1	Նալչաջյան Կենտրոն ՍՊԸ	ՀՀ, ք Երևան, Մարիա Յակոբսոնի փողոց, 9 ա շենք, բն 32., Հեռ.՝ +37455676364, էլ. հասցե՝ nalchajyankentron@gmail.com

2. **Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակցի ներկայացրած հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում է որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

3. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները.**

Չափաբաժին 1. *Բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում CPV-79541100/503*

Նախահաշվային գինը /աղյուսակի հանրագումար/			**129 000**	
Կնքվող պայմանագրի գումար			**7 900 000**	
Չափաբաժին	**Մասնակցի անվանումը**	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	**Նալչաջյան Կենտրոն ՍՊԸ**	**107 400**	**-**	**107 400**

Չափաբաժին 2. *Գրավոր թարգմանչական ծառայությունների մատուցում CPV-79531100/501*

Նախահաշվային գինը /աղյուսակի հանրագումար/			**74 000**	
Կնքվող պայմանագրի գումար			**3 100 000**	
Չափաբաժին	**Մասնակցի անվանումը**	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	**Նալչաջյան Կենտրոն ՍՊԸ**	**61 600**	**-**	**61 600**

4. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-31 *ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից* ***«Նալչաջյան Կենտրոն» ՍՊԸ-ի*** *կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝*

- ***Նալչաջյան Կենտրոն ՍՊԸ-ի*** *կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերում բացակայում են միավոր արժեքների բացվածքները՝ 1.1 և 1.2 հավելվածներին համապատասխան ձևաչափերով: Ինչպես նաև բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող կայքէջի հղումը (թարմացված տվյալներով), որը պետք է համապատասխանի «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին:*

Հանձնաժողովը որոշեց՝

*Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-31 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ /1/ աշխատանքային օրով և **Նալչաջյան Կենտրոն ՍՊԸ-ին** առաջարկել /1/ աշխատանքային օրվա ընթացքում կատարել վերոգրյալ անհամապատասխանությունների շտկումները:*

5. Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված մեկ /1/ աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը, այն է 13.03.2026 թվականին, ժամը 16:00–ին՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ *կողմ 5 դեմ 0 :*

Հանձնաժողովի Նախագահ՝
վարչության պետ — *Ռ. Պետրոսյան*

Հայտը գնահատող անդամներ՝
բաժնի պետ — *Ս. Հարությունյան*
բաժնի պետ — *Ի. Հակոբյան*

Հայտը բացող անդամներ՝
գլխավոր մասնագետ — *Ա. Ճկնավորյան*
գլխավոր մասնագետ — *Գ. Մարությունյան*

Հանձնաժողովի քարտուղար՝
ՏԿ ԳՀ գլխավոր մասնագետ — *Ա. Սարգսյան*